№ 38 ՈՒՐԲԱԹ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ № 38

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. 20 կօպ., վերջին երեսի վրա՝ 10 կօպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(Ընկերի Իմպլյօնսկայա և Սվետասլավսկի-Միքրսկայա փողոցների, № 1, տպատարան Օգնօսուսովի)

Կազմակերպելով, մայրաքաղաքի բարեգործական հաստատութիւնների օրինակով,

ԱՄԵՆ ՄԻ ՏԱՆ ԱԻԵԼՈՐԴ ԻՐԵՐԻ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ,

դիմում է քաղաքի ազգաբնակութեանը խնդրելով նուիրել զանազան հին զգեստներ, ինչպէս օրինակ՝ հին կրկնաօշիկներ և օշիներ, զանազան կտորեղէն, լրագրի թուղթ, հին երկաթ, պղինձ, ցինկ և այլ մետաղեայ լօմ, հացի կտորներ, մոմի մնացորդներ, զանազան թիթեղեայ և այլ ամանիներ, խողովակներ, շշեր և այլ ապակեղէն, զանազան շորեր ու սպիտակեղէն և այլն:

Զր պեsf ե նեղվել նուէրի ոչ fանակից, ոչ ռռակից:

Բոլորն էլ վաճառվելու են և միջոցներ կը տան պահելու և կրթելու Թիֆլիսի աղքատ երեխաներին:

Նուիրված իրերը ստանալու համար կուղարկվեն յատուկ մարդիկ:

Տեղեկութիւնների համար դիմել գրաւոր կամ բերանացի Իւ. Զապլիցին (Վելիկոնեժեսկայա, 46) և Մ. Բէլոզէրսկիին (Ծդնէթսկայա, 17, բն. 2):

(ու. չ.) (ա.) 165. 10—3

Թիֆլիսի Ժողովարան

Ուրբաթ, փետրվարի 19-ին տեղի կունենայ

→ ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ ←

Կը նուագէ լարանուագների խումբը պ. Գիշինիի ղեկավարութեամբ:

Դիմակների համար տոմսակները վաճառվում են Ժողովարանի շվեյցարի մօտ:

Հիւրերը թոյլատրվում են համաձայն ընդհանուր հիմունքների՝ վճարելով—տղամարդիկ 1 ռուբ., իսկ կանայք 50 կօպ.:

Հագուստը.—զինուորականները սովորական հագուստով, քաղաքացիները սև սիրուսկով կամ ազգային տարազով:

(Տ. ու.) (առ.) 205. 2—2

ԱՆՄՈՌԱՑ ԹՐԸ

Անմոռաց է այն վեհագոյն սքանչելի օրը, որ Ռուսաստանի առաջին ազատագրութեան նախադուռն եղաւ:

Փետրվարի 19-ը ոչ միայն ճորտերի ազատութեան հրատարակութեան օրն է, այլ և հիմնադիրը այն փրկարար քաղաքակրթական մեծ մտաւոր հասարակական շարժման, որով վաթսունական թուականները սիրելի և թանգագին դարձան մեծ պետութեան մէջ ապրող բոլոր ազգերի համար:

Վաթսունական թուերը հանդիսացան իբրև ստեղծագործական սաղմեր, իբրև բեղմնաւոր սերմանաններ այն ընդարձակ զարգացման համար, որով անցվեցին Ռուսաստանում մի շարք սերունդներ առաջադիմական ձգտումներով և քաղաքակրթական անշէջ լոյսի պաշտամունքով:

Լուսաճաճանչ է փետրվարի 19-ը ռուսական ժողովրդի համար, ոգեւորիչ է նա պետական ընդհանրութեան և նրա բոլոր մասնիկների համար:

Մի տարի ևս, և արդէն լրացած կը լինի կէս դար այն օրից, երբ ճորտերի ազատութեան արտոնագիրը վաւերացվեց՝ կարգաւորելու նոր յարաբերութիւններ, ստեղծելու տնտեսական և հասարակական կեանքի նոր պայմաններ:

Փետրվարի 19-ը բաղդաւոր ատղ ունէր: Նա հանդէս եկաւ՝ իբրև ոգեւորութեան և մտաւոր հասարակական վերածնութեան մի պատգամ: Յետագայ տարիներում նա շարունակեց իր թարմացնող և քաջալերող ազդեցութիւնը մարդկանց վրա. և այսօր, իբրև պատմական-կուլտուրական մի վերութիւն՝ հանդիսանում է մեր առաջ իր փրկարար և սրտագրաւ էութեամբ:

Մեր վերջին ազատագրական շարժումը, չը նայելով իր աւելի ուժեղ թափին և խոշոր արտայայտութեան, չէ թելադրում ներկայումս հիացման և ոգեւորութեան այնպիսի պաշտամունքներ, որոնք օրհնաբանէին այն շաւիղները և ուղիները, որոնք տանում են դէպի ժողովրդական գործունէութեան ասպարէզները: Այդ կողմից փետրվարի 19-ը աւելի երջանիկ և նախանձելի էր: Նա սկիզբ եղաւ և դրդիչ հանդիսացաւ խոշոր հասարակական ոգեւորութեան համար:

Ճիշդ է, վաթսունական թուականների լուսաբաշխ գաղափարի դիմաց սկսեցին կամաց-կամաց կազմակերպվել յետադարձ ոյժերի համախմբում և ռեակցիոնական տարրերի խտացում, բայց բացասական և ստուերածին երեւոյթները չը յանդգնեցին համարձակութեամբ տիրել հասարակական կեանքի ասպարէզին, և լուսաւոր գործունները երկար տարիներ պաշտպանեցին իրանց գրաւած գաղափարական և գիրքերը:

Այն կենտրոնական կէտը, որ փետրվարի 19-ի գլխաւոր ոգեւորիչ տարրն էր, այն է հողագործի ազատ աշխատանքի ապահովութիւնը սեփական հողաբաժնի վրա, դժբաղդաբար, չէր վերցրել իր հովանաւորութեան տակ նաև անդրկովկասեան հողագործին: Եւ վերջինս մինչև այսօր մնում է միջնադարեան անպատեհութիւնների ճիրանների մէջ:

Եւ անշուշտ մեզնից իւրաքանչիւրը կը ցանկանար, որ գոնէ այս տարի, ներկայ 1910 թուականին վերջնական լուծում ստանային հողային ճորտութիւնից մնացած բոլոր կնճռոտ խնդիրները և մենք կարող լինէինք յաջորդ 1911 թուին, երբ ոտնում կը լինենք փետրվարի 19-ին կէս-դարեայ յոբելեանը, համարձակ կերպով ասել, որ այդ նշանաւոր հրովարտակի իմաստը տարածված է ամենուրեք և մեր երկրում ամեն տեղ կարգաւորված է գիւղացիական հողաբաժինների անկախութեան գործը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 17 փետրվարի

Հարցապնդումների դումայական մասնաժողովը Դումային ներկայացրեց մի զեկուցագիր այն մասին, թէ պէտք է հարցապնդումներ ուղղել ներքին գործերի մինիստրին.

1) Ինչ հիման վրա է հրատարակվել 1907 թ. մայիսի 22-ի հրամանը, որով մինիստրը իրաւունք է ստանում ընդլայնել հրէաների իրաւունքները՝ առանց օրէնսդրական հաստատութիւնների կամքը հարցնելու:

2) Եթէ անգամ հրամանը արգասիք է բացառիկ հանգամանքների և հիմնված չէ օրէնքի վրա, ինչո՞ւ նա մինչև օրս շարունակում է պահել իր ոյժը:

3) Ինչո՞ւ մինիստրը ձեռք չէ առնում պատշաճ միջոցներ, որպէսզի ստորադրեալ վարչական իշխանութիւնները ճշդութեամբ կատարեն այն օրէնքը, որ թոյլ չէ տալիս հրէաներին բնակվել իրանց մշտական բնակատեղերից դուրս:

4) Յայտնի՞ է արդեօք մինիստրների խորհրդի նախագահին, որ Կովկասի կրթական հաստատութիւններում ստեղծվել է հասարակութեան և խաղաղ աշխատող երիտասարդութեան համար անտանելի մի դրութիւն, որի գոյութեամբ ապահովված չէ պարապմունքների կանոնաւոր ընթացքը և նոյն իսկ ինքը կեանքը. եթէ յայտնի է, ապա ի՞նչպիսի միջոցներ են ձեռք առնված ապահովելու նորմալ կարգ ու կանոնը և խաղաղ ազգաբնակութեանը ազատելու ներկայիս այնտեղ տիրող յեղափոխական տարրից:

5) Յայտնի՞ է արդեօք նրան, որ կրթական հաստատութեան անձերից մի քանիսը իրանց մասնակցութեամբ խրախուսել են երիտասարդութեան յեղափոխական շարժումը. եթէ յայտնի է, ապա բոլոր յանցաւորները ենթարկվե՞լ են արդեօք քրէական պատասխանատուութեան:

Բիւջէտային մասնաժողովը ներքին գործերի մինիստրութեան նախահաշիւի քննութեան ժամանակ ցանկութիւն յայտնեց շուտով օրինագիծ ներկայացնել Դումային ոստիկանութեան բարեկարգման մասին:

Բոլգարական թագաւորը այցելեց բուխարական էմիրին Զմերային պալատում՝ Մալինով և Պապրիկով մինիստրների ուղեկցութեամբ:

Բոլգարական թագաւորը կենդանի ծաղիկներից պսակ դրեց Ալէքսանդր II կայսրի դամբարանի վրա:

Հեռագրական գործակալութիւնս լիազօրված է ամենակատարեալ կերպով հերքել «Бирж. Вѣд.»-ի այն լուրը, թէ իբր Ռուսաստանը երեք պատերազմական նաւ է ընծայել Բոլգարիային: (Հ. Գ.)

—

Հելսինգֆորս, 17 փետրվարի

Բարձրագոյնս հրամայվեց, որպէս զի տալմանները սէյմերը բանալու և փակելու ժամանակ բաւականան միմիայն ամենահպատակ յարգանքի խօսքերը յայտնելով: Սենատը որոշեց այդ մասին հրատարակել որոշումների ժողովածուի մէջ: Առանձին կարծիք ունեցաւ զեկուցանողը և դատախազի պաշտօնակատարը:

Ընտրվեցին. տալման՝ Սվինխուվուդ՝ երիտասարդ ֆին, փոխ-տալմաններ՝ Տաննէր՝ սոց.-դեմօկրատ և Սեատերհօլմ՝ շվեդ: Տալմանի և երկրորդ փոխտալմանի քուէարկութեան ժամանակ՝ սոց.-դեմօկրատները տուին դատարկ բիւլլետէններ: (Հ. Գ.)

—

Խարբին, 17 փետրվարի

Տեղեկութիւններ ստացվեցին, որ Գէկինում յուզալի դրութիւն է տիրում նորակոչ զինուորացուների ցուցակագրութեան պատճառով: (Հ. Գ.)

—

Վիէննա, 17 փետրվարի

Պատգամաւորների պալատում մինիստր-նախագահ Բինէրը յայտնեց, որ կառավարութիւնը կը շարունակէ ամեն ջանք գործ դնել, որպէսզի ըստ հնարաւորութեան թուլացնէ ազգային խորութիւնը օրէնսդրական միջոցներով և անկողմնապահ վերաբերմունքով դէպի բոլոր ազգութիւնները: Աչքաթող չանելով առանձին ազգութիւնների օրինական պահանջները, կառավարութիւնը կաշխատէ օգտվել ազգային կուսակցութիւնների միացեալ օժանդակութիւնից: (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 17 փետրվարի

Նորակոչ զինուորացուներին ծառայութեան կանչելը յետաձգվեց անորոշ ժամանակով: (Հ. Գ.)

—

Ցէտինէ, 17 փետրվարի

Ի պատիւ աւստրօ-ունգարական նաւատորմի օֆիցէրների՝ կառավարութիւնը ճաշ տուեց: Թատրօնում եղաւ համերգ: Աւստրեան օֆիցէրներն ընդունվեցին Նիկոլայ իշխանից: Տեղի ունեցաւ պաշտօնական հացկերոյթ պալատում: (Հ. Գ.)

—

Բերլին, 17 փետրվարի

Սօցիալիստների բողոքի միտինգը պրուսական ընտրողական իրաւունքի դէմ ոստիկանութիւնն արգելեց: (Հ. Գ.)

—

Գուլլուէն, 17 փետրվարի

Գործադիր ջուլհակների հետ ընդհարվելիս վիրաւորվեց մի ժանդարմ: Գործադիրները ոյժով գրոհ տուին դէպի ջուլհակութեան գործարանը և քարուքանդ արին մեքենաների բաժանմունքը: Կանչված են զօրքեր: (Հ. Գ.)

—

Աթէնք, 17 փետրվարի

Տիպալդոսը մեկնեց արտասահման: (Հ. Գ.)

—

Վաշինգտոն, 17 փետրվարի

Ճանապարհորդական գնացքի վրա, որ կանգ էր առել Կասկադ լեռներում, փլվեց մի ձիւնակոյտ, հանեցին 25 դիակ. 25 մարդ դեռ հանված չեն: (Հ. Գ.)

—

Լիսաբէն, 17 փետրվարի

Օրիօն գետը ծածկեց մի քանի գիւղեր: Ագատարար աշխատանքներին մասնակցում են նաև զօրքերը: (Հ. Գ.)

—

Ֆիլադէլֆիա, 17 փետրվարի

Կարգը քաղաքում վերականգնվեց: (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Դիպլոմատիական շրջանակներում տեղեկութիւն է ստացվել, որ Գէորգ թագաւորի վճիռը գահից հրաժարվելու մասին անքակտելի է, բայց նրա կատարումը կարող է ձգձգվել, որովհետև թագաւորը ցանկանում է գահը յանձնել իր զինաստիային պատկանող մինին: Ասում են, որ հելլէնների թագաւոր հռչակված է գահաժառանգի որդի Կոնստանդինը:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը առաջարկեց մասնաւոր կրթական հաստատութիւնների տէրերին անպայման նկատի առնել հրէաներին իրանց դպրոցներն ընդունելու սահմանված նորման: Հակառակ դէպքում ուսուցիչները կարող են զրկվել պետական ծառայութեան իրաւունքից, իսկ կրթական հաստատութիւնները կը զրկվեն կառավարական դպրոցների իրաւունքներից: («Բ.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 17 փետրվարի

Ընդհանուր զրդռումը մի փոքր թուլացաւ: Թիւրք-բոլգարական զինուորական մասնաժողովը զբաղված է միջադէպերը քննելով: Կարելի է յուսալ հանգստութեան և թիւրիմացութիւնների խաղաղ վախճանի վրա, եթէ նոր ընդհարումներ չը պատահեն սահմանագլխին: Բ. Դուռը բոլգարական կառավարութիւնից խնդրեց առաջն առնել ռումելիական պաշտօնական հացկերոյթի պատասխան: (Հ. Գ.)

—

Բերլին, 17 փետրվարի

Սօցիալիստների բողոքի միտինգը պրուսական ընտրողական իրաւունքի դէմ ոստիկանութիւնն արգելեց: (Հ. Գ.)

—

Գուլլուէն, 17 փետրվարի

Գործադիր ջուլհակների հետ ընդհարվելիս վիրաւորվեց մի ժանդարմ: Գործադիրները ոյժով գրոհ տուին դէպի ջուլհակութեան գործարանը և քարուքանդ արին մեքենաների բաժանմունքը: Կանչված են զօրքեր: (Հ. Գ.)

—

Աթէնք, 17 փետրվարի

Տիպալդոսը մեկնեց արտասահման: (Հ. Գ.)

—

Վաշինգտոն, 17 փետրվարի

Ճանապարհորդական գնացքի վրա, որ կանգ էր առել Կասկադ լեռներում, փլվեց մի ձիւնակոյտ, հանեցին 25 դիակ. 25 մարդ դեռ հանված չեն: (Հ. Գ.)

—

Լիսաբէն, 17 փետրվարի

Օրիօն գետը ծածկեց մի քանի գիւղեր: Ագատարար աշխատանքներին մասնակցում են նաև զօրքերը: (Հ. Գ.)

—

Ֆիլադէլֆիա, 17 փետրվարի

Կարգը քաղաքում վերականգնվեց: (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Դիպլոմատիական շրջանակներում տեղեկութիւն է ստացվել, որ Գէորգ թագաւորի վճիռը գահից հրաժարվելու մասին անքակտելի է, բայց նրա կատարումը կարող է ձգձգվել, որովհետև թագաւորը ցանկանում է գահը յանձնել իր զինաստիային պատկանող մինին: Ասում են, որ հելլէնների թագաւոր հռչակված է գահաժառանգի որդի Կոնստանդինը:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը առաջարկեց մասնաւոր կրթական հաստատութիւնների տէրերին անպայման նկատի առնել հրէաներին իրանց դպրոցներն ընդունելու սահմանված նորման: Հակառակ դէպքում ուսուցիչները կարող են զրկվել պետական ծառայութեան իրաւունքից, իսկ կրթական հաստատութիւնները կը զրկվեն կառավարական դպրոցների իրաւունքներից: («Բ.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 17 փետրվարի

Ընդհանուր զրդռումը մի փոքր թուլացաւ: Թիւրք-բոլգարական զինուորական մասնաժողովը զբաղված է միջադէպերը քննելով: Կարելի է յուսալ հանգստութեան և թիւրիմացութիւնների խաղաղ վախճանի վրա, եթէ նոր ընդհարումներ չը պատահեն սահմանագլխին: Բ. Դուռը բոլգարական կառավարութիւնից խնդրեց առաջն առնել ռումելիական պաշտօնական հացկերոյթի պատասխան: (Հ. Գ.)

ԳՈՒՆԱԿԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՕԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

Կ. Պոլիս, 7 փետրվար

Հոս Պոլսոյ մէջ հաղիւ կը յիշուի Արփիար Արփիարեանը. ու այն «Հայրենիք» թերթը, որ իր վաղեմի գրական համբաւը Արփ. Արփիարեանին կը պարտի, յօդուածներու շարքով չարձանագրեց մեծ գրողին յիշատակը:

Մեծ հրապարակագրողին յիշատակը պըղծուած կը տեսնեմ Կահիրէի մէջ. գիտէի, որ Արփիար միշտ սովալլուկ ապրած է, սակայն չէի կարծեր, որ իր ժահուընէ վերջն ալ դրամի պակասութիւնը ժառանգական ժառանգութիւն մը պիտի ըլլար իր մտաւորական արտադրութեանց... վաճառական Արփիարին գրութեանց մնո�ը 2 տարի գրաւած քովը կը պահէ, և Յարութիւն քահ. Յակոբեան մը այդ գրական պարտատուրհակ արկղը 2 տարի վերջը կը յաջողի վաճառականին ձեռքէն ազատել: Երկու տարի... վերջը. և մտածեցէք, որ Կահիրէի մէջ կը գտնուին Արփիարին հիացող մեծահարուստ հայեր. և մտածեցէք, որ Արփիարի յուղարկաւորութեան մասնակցած է միլիոնատէր Պօղոս փաշա Նուպարը... և մտածեցէք, որ Արփիարի հողվարին համար յուշարձան մը կանգնելու համար յանձնաժողով մը դրամ կը հաւաքէր... Այս նախատինք է, ու պատասխանատուն միայն անշրջահայեցութիւնն է. ես համոզուած եմ, որ եթէ հարուստի մը իմացուցած ըլլային վարձակալին այդ կացութիւնը, մնոնակը ոչ 2 տարի, այլ 2 օր ալ վարձակալի քովը չէր մնար: Եղելութիւնը տխուր է. միայն այս առթիւ Մարսիլիայի «Արմենիայի» խմբագիր հաժակբեկի Մկրտիչ Փորթուգալեան կը շեշտէ, որ Արփիար ժահրձանի պէտք չունի, այլ գրքերուն հրատարակութեան. «Մշակի» մէջ այս մասին գրած եմ արդէն. խմբագրութիւնն ալ խոստացաւ կատարել, սակայն ես կը սպասեմ, որ հարուստ մը ինքնաբերաբար յանձն առնէ անոնց տպագրութեան ծախքը, մանաւանդ անոնք, որ կը հիանան անոր գրչին:

*

Խնդիր է, թէ անցագրոց մէջ Թիւրքը իր ոչ-իսլամ ցեղերն ինչ անունով պիտի արձանագրէ. այս առթիւ տեղական թերթերէն «Բիւզանդիոն» «Շինծու ձուլումը» վերնագրով գեղեցիկ խմբագրական մը հրատարակեց. իր խօսքերը ձուլումի հեղինակ երիտասարդ - Թիւրքին ուղղելով կըսէ. «Թիւրքիան բազմատարը պետութեան նըմոյշ մըն է, և, հետևաբար, մեր հեռաւելի օրինակն Աւստրիան և Անգլիան կրնան ըլլալ: Աւստրեան-հունգարական և անգլիական մարդահամարի թղթոց վրայ ոչ միայն մարդուն հպատակութիւնը կամ քաղաքացիութիւնը կը յիշուի, այլ և կրօնը, և մէն մի կրօնի մասին իր պատկանած յարանուանութիւնը, ինչպէս և իր ցեղը, իբր գերման, սերբ, խրուաթ, չեհ, չին, ռութէն, Աւստրիոյ բաժնին մէջ ընդհանուր հպատակութեան կամ քաղաքական ազգութեան (nationalité) անունն ըլլալով աւստրիացի, իսկ տէրութեան միւս կիսուն մէջ՝ հունգարացի: Բրիտանեան արձանագրութեան թուղթին մէջ կորոշուին սկովտացին, իրլանդացին, գալլէացին, քանադացին, աւստրալիացին և այլն իր անգլիական եկեղեցիով, մեթոդականութեամբ, երիցականութեամբ, կաթոլիկութեամբ և այլն: Մենք ահա այդ տիպն ունինք մեզ հետեւելի օրինակ: Եթէ այդ մանրամասնութիւնը Անգլիոյ և Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ հակառակ չեն պետական միութեան, մեր մէջ ալ հակառակ չեն կրնար ըլլալ»: Այս փաստացի տեղեկութիւնները եթէ ունենային մեր հայ երեսփոխանները՝ Պոյաճեան և Վարդգէս, առաջինը պիտի չըսէր. «Հայ մը իսլամ ալ կրնայ ըլլալ, բայց դարձեալ հայ է». և երկրորդն ալ նոյնպէս այս խնդրոյ առթիւ ըսելու չէր՝ «Ես կրնամ կրօն չունենալ, բայց հայ ըլլալէ չեմ դադրիր»: Մեր այս ազգասէր երեսփոխաններն առանց աչալրջութեան կարտաբերեն այդ խօսքերը, որոնք եթէ ըսուէին ինքնուրոյն պետութիւն մը ունեցած ժամանակնիս, այնքան զարմանալի պիտի չտեսնուէին: Ազգ մը կամ վաղեմի ցեղ մը երբ կորսնցնէ իր բնորոշ տէրութիւնը, իր կրօնքով և իր լեզուով կրնայ առանձնական յատկութիւնները պահել: Օսմանեան պետութեան մէջ ձուլուելու չենք, այլ անոր մէկ օգտակար մասը կազմելու ենք: Խոհական Թիւրքը և գիտակից հայը՝ հոժարաւատար այս համոզումը գոյացուցած են, որ Թիւրքը հայուն և հայը Թիւրքին ձեռք ձեռքի տրուած՝ կրնան ապրիլ. ասկից դուրս ուրիշ ճշմարտութիւն չկինտռնք ցնդական բանաձևերու մէջ:

*

Թիւրքին չկրցանք սորվեցնել, թէ հայը հպատակ ցեղերուն մէջ ամենէն հարազատ օսմանցին է, նոյն իսկ ազատամիտ երիտասարդ-Թիւրքին մէջ այդ ճշմարտութիւնը գիտցողները շատ քիչ են, որով քանի որ Թիւրքին մեծամասնութիւնը զմեզ չէ ճանչցած, Գաժառ-Քաթիպան թող հնչէ իր այս խօսքերը.

«Թիւրք, լաւ պահպանէ դու հայոց ազգին,
Նա քարէ պատ է քեզ, ոչ թշնամին»:

Սահմանադրութիւնը վտանգի մէջ է, վասնզի ըէակսիօնի արիւնի հոտը կառնուի, և դժբաղդաբար ազատամիտ կարծուած սպաներու մէջ ալ ապստամբութեան խլրտումը ստուգուած է: Յաճենայն դէպս վարչապետին գահլիճին և երեսփոխանական ազատամիտ դասակարգին պարտականութիւնն է փրկել օսմանեան դրօշը ըէակսիօնի ժանգախտէն, և այդ կարելի է՝ զինելով թշնամի կարծուած ամենէն հարազատ օսմանցի հպատակ ցեղերը... Ե.

Ֆ. Ֆրանսե, 12 փետրվար

Ֆրանսական ճշտարար շատրվանը հարուցեց Յուլիոսյան փիսերը։ Ինչպես գրում է «Ֆիգարոն», Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի անդամ Ռոմանը ասել է, թե Լուվրի թանգարանի հնագիտական բաժնի հավաքածուներում գտնվող հնագույն ժամացույցը, որը ցուցադրվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում, ոչ թե Յուլիոս Կեսարի ժամանակներից է, ինչպես մինչև հիմա կարծում էին, այլ ավելի ուշ դարերի։ Ակադեմիայի անդամ Ռոմանը ասել է, որ ժամացույցի ներսում գտնվող մասերը հնարվել են Ֆրանսիայում 1900 թվականից հետո։ Ինչպես գրում է «Ֆիգարոն», ժամացույցի ներսում գտնվող մասերը պատրաստվել են 1890 թվականին։ Ընդամենը հարյուր տարի առաջ։ Ինչպես գրում է «Ֆիգարոն», ժամացույցի ներսում գտնվող մասերը պատրաստվել են Ֆրանսիայում

Ռուսերի և այլ ասիական ցեղերի

Ուսումնական ուսումնասիրություն

Դիտո՞ր ոչ ոք չգիտի, թե ինչպես ծագեցին ռուսերը, ինչպես ստեղծեցին իրենց պետությունը, ինչպես ստացան իրենց անունը։ Ռուսերի մասին գրքերում գրվածը ոչ մի հիմք չունի

հրդի անգամ ինժեներ Սահակ Լիսիցեանը, որ և արդէն պատրաստել է:

Զանազան գիւղերից արդէն ստացվում են խնդիրներ, որ իրանց ուղարկվի յատակագիծ, որպիսի խնդիր ստացվել է ի միջի այլոց Ախալքալաքի ճիւղի վարչութեան միջոցով նոյն գաւառի երեք գիւղերից: Բայց կան բազմաթիւ գիւղեր, որոնք թէև ցանկանում են իրանց դպրոցները գետեղել շատ թէ քիչ վայելուչ շինութիւնների մէջ, միայն նիւթական ոյժ չունեն, կարօտ են կողմնակի օգնութեան:

Այդ կարիքին նորերս արձագանք տուեց Թիֆլիսի վաճառական Ա. Ի. Ամիրաղեանը, որ ամսիս 12-ին գրաւոր յայտնեց խորհրդին, որ նա նուիրում է Բարեգ. Ընկ. 1000 ր. այն պայմանով, որ ընկերութիւնը նախաձեռնի կառուցանել նուիրատուի ծնընդավայրում, Ղազախի գաւառի Բարանա գիւղում, դպրոցական շէնք վերոյիշեալ յատակագծով:

Խորհուրդս, շնորհակալութեամբ ընդունելով նուիրատուի առաջարկը որոշից այս գարնանից սկսել շինութեան գործը Բարանա գիւղում, պայմանաւորվելով նախապէս գիւղական հասարակութեան հետ, որ վերջինս յանձն առնի տալ ձրի՝ շինութեան համար քար, կիր, աւազ և մշակներ աշխատանքի համար:

Շատ ցանկալի է, որ ուրիշները ևս, մանաւանդ քաղաքներում ընակվող ունևոր գաւառացիք, օգնութեան հասնէին այս զգալի կարիքներին: Խորհուրդ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԳՈՐԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Տեղական թերթերում լոյս տեսաւ, որ Հայ Գիւղ. և Տնայն. Ընկ. մասնաժողովը իր նիստին հրաւիրել էր տնայնագործական գործուածքների առևտրով պարապող մասնագէտ մարդկանց, որոնք իրանց վրա են վերցրել որոշ ձևի պատրաստված գործերը սպառելու աշխատանքը:

Շատ ուրախալի է տնայնագործական մասնաժողովի այդ քայլը և ցանկալի է իրագործված տեսնել մասնագէտների համակրելի առաջարկը: Վերջապէս ժամանակ է այդ գեղեցիկ, բայց մոռացութեան տրված գործագործութեան վրա լուրջ ուշադրութիւն դարձնել:

Գործագործութեան նշանակութեան մասին Թիֆլիսում Հայ Գիւղատ. և Տնայն. Ընկ. ձեռներէցութեամբ անցեալ տարվայ ապրիլին կայացած տնայնագործական համագումարին զեկուցումներ տուին շատ շատերը: Իսկ իշխ. Մ. Թումանեանը առաջարկեց ինստրուկտորներ պատրաստելու համար Թիֆլիսում բանալ գործագործական ուսումնարան, որը համագումարի կողմից համակրանքի արժանացաւ: Ճիշդ է, մի այդպիսի ուսումնարանի բանալը կը հանդիպի դժուարութիւնների, բայց ի՞նչ կասէք գործագործութեան արհեստանոցի մասին, որը հեշտութեամբ կարելի է իրագործել, եթէ միայն լինեն նախաձեռնողներ:

Լիայոյս ենք, որ Հ. Գիւղ. և Տնայն. Ընկ. տնայնագործական մասնաճիւղը կիրագործի իր սրտին մօտ այդ համակրելի գործը:

Թէ գործագործութեան որ մասը աւելի շահաւէտ է բանալ Թիֆլիսում, այդ մասին կը խօսենք մի ուրիշ անգամ:

Ա. Փարսամուզեան

Թիֆլիս, 14 փետրվարի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 11 փետրվարի

Այս երկու-երեք օրում Թաւրիզում կատարված մի ակտ շատ ընորոշ մի հանգամանք է ներկայացնում այն գործունէութեան վերաբերեալ, որ տասն տարուց աւելի է, ինչ Թաւրիզում բուն դրած կաթոլիկ միսիան սկսել է ցոյց տալ:

Կաթոլիկ կղերականները հանրապետական Ֆրանսիայից դուրս գալուց յետոյ՝ Ասիայի խորքերում կարողացան բանակ դնել ու գործել, գտնելով այս հողի վրա նպատակայարմար պայմաններ և միանգամայն աջակցութիւն ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչներից: Թաւրիզում ունեն մեծածախ շէնքեր, որոնք ծառայում են դպրոցների, եկեղեցու և այլն: Տղաների ուսումնարանում աշակերտներ ընդունվում են բոլոր ազգութիւններից անխտիր: Օրիորդների ուսումնարանում նոյնպէս և նոյն ձևի՝ կոյսերին յանձնված կըրթութեամբ ու դաստիարակութեամբ: Ուրիշ ազգութիւնների շարքում կան նաև բազմաթիւ հայ աղջիկներ՝ թէ երթևեկ, թէ գիւղերօթիկ: Գիշերօթիկներից մի հայ գիւղացի, 18 տարեկան, աղջկայ ձեռքն է խնդրում և նշանվում: Հաճայնութեան գալիս, հաւատանուէր կոյսերը չեն մոռանում յիշեցնել երիտասարդին և նրա ծնողներին, որ պսակը կատարվելու է կաթոլիկական ծիսակատարութեամբ, ըստ որում օրիորդն արդէն ընդունել է հռոմէական դաւանութիւն: Ծնողները գնում են անտարբերութեամբ: Մօտենում է հարսանիքի օրը: Տեղի հարսնորները, գիշերը ժամը 10-ին, իրանց նաղարա-զուռնով մօտենում են կոյսերի ուսումնարանին և ընդունվում ներս, որտեղ հագված-սքված հարսը, մեծարանքի սեղանը սպասում էին հարսնառի գալուստեան: Բայց ամեն բանից առաջ երկիւղած կոյսերի կողմից ներկայացվում է մի գրված թուղթ փեսին և նրա ծնողներին, որ ստորագրեն, թէ փեսան ևս ընդունում է հռոմէական դաւանութիւն, արարողութիւնը նոյն դաւանանքով է կատարվելու և, որ անհրաժեշտն է, երեխաներն ևս կաթոլիկ եկեղեցուն են պատկանելու ապագային: Փեսան մերժում է այդ, ինչպէս նաև իւրայինները. հարսը պնդում է, որ ինքը կաթոլիկ է և այլ դաւանութիւն չէ ընդունում: Այս վիճակի մէջ հարսը հանում է հարսանեկան շորերը, շպրտում մի կողմ, և հարսնառը դուրս է գալիս առանց հարսի: Իբրև տգեղ երևոյթ յայտնում եմ, որ հարսնառորներից, ոմանք տաք-գլուխներ, անկրթաբար կոտրատում են կուսանոցի մի քանի ապակիները ու հեռանում: Աղջկայ ծնողները՝ հայ եկեղեցու անդամներ՝ դիմել են թեմական Կարապետ եպիսկոպոսին ու կոյսերից յետ ուզել իրանց աղջկան: Այս դէպքում էլ կաթոլիկ միսիայի գլխաւոր պետ Բերտունէսկ չէ զիջում օրիորդին յանձնել իր ծնողներին՝ մի շատ հոգի Գէհենը չը նետելու երկիւղով...: Սակայն հիւպատոսն յայտնել է կաթոլիկ մեծաւորին, որ պարտական է աղջկան տալ ծնողներին՝ հանրապետական կառավարութեան օրէնքով: Օրիորդը դեռ ևս մնում է նրանց մօտ:

Հարկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գիւղացիական բանկը 1909 թուին իրան պատկանեալ կալուածքներից վաճառել է 560,947 դեսեատին:

ԲԱԳՈՒ: Մի հայի բնակարանում անյայտ պատճառից պայթում առաջացաւ: Այրվեցին հարևան բնակարանները: Հրդեհաշէջները ազատեցին մի կնոջ՝ ծծկեր երեխայի և ուրիշ եօթն երեխաների հետ: Վերջիններս կեանքի նշաններ ցոյց չեն տալիս: Կնոջ ամուսինն ստացաւ ծանր խանձուածքներ:

Դաղստանի շրջանում՝ Կասպից ծովի ափին հիւանդութիւն է երևացել կարմիր ձկան մէջ: Վախենում են, որ հիւանդութիւնն անցնի տառեխին, որի որսը շուտով կը սկսվի:

ՍՏՕԿՀՕԼՄ: Ռէյխստագում շուտով կը քննվի ժաքոբային տարիքը:

ԴԱՐՁԻԼԻՆԳ: Եկաւ մեծ շքախմբով դալայ-լաման:

ՊԷՏԻՆ: Ռուսաց դեսպանը յայտնեց, որ կայսերական կառավարութիւնը չէ կարող անտարբեր վերաբերվել դէպի բազմաթիւ ռուսական բուդդիստների հոգևոր պետի գահազրկութիւնը: Չին մինիստրները պատասխանեցին, որ յիշեալ միջոցն ազդեցութիւն չի անի Տիբէթի ներքին կամի և լամայի կրօնի վրա:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Զմերային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պousшsшar գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.: Մարդասшar գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.: Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ: Առագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.:

ԶՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պousшsшar 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Զուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.: Մարդшsшar ապրանք.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում: Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ մարդшsшar № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.: Պousшային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.: Մարդшsшar № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պousшsшar գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդшsшar № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Առագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.: Վերջին գնացքը չէ գնում Բաթում:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդшsшar № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պousшային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդшsшar № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին: Վերջին գնացքը Բագու չէ գնում:

ԶՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պousшsшar 6 ժամ 19 ր. առ., մարդшsшar-ապրանքшsшar՝ 6 ժ. 44 ր. երեկոյան:

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վնեերական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և մղպասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Զբաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—19

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հիւանդանոց

Մօտական մանկական

Թիֆլիս, Միխայլովսկի պր., Միքայէլեան հիւ. դիմաց, 59, սէլ. 1026

Հիւանդների ընդունելութիւն.

ՄԻՐ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, միզասեռական, սիֆիլիսի և կաթուի հիւ.:

Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ:

Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ:

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ:

Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ:

Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ—առ. ժ. 11½—12½-ը, ներքին և երեխաների հիւանդութիւններ:

Ա. Դ. ԿԱՂՄԲԿՕՎՕ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ:

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնոզով: Միկրոսկոպական, բակտերիոլոգիական և քիմիական հետազոտութիւններ: Ծաղկի պատուաստումն: Ծծմայրերի քննութիւն: Վճարը խորհրդի համար 50 կ.: Օպերացիաները և համախորհրդները ըստ համաձայնութեան: Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից

(կ. ե. ու.) 236. 100—99

ԲԺԻՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ներքին և ջղային հիւանդութիւններ:

Ընդունելութիւնը

ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.

Միքայէլեան փողոց, № 27.

(ա. օ.) 1087. 100—80

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԻԵԱՆ

Մանկական միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Ընդունում է հիւանդներին՝

Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը:
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը:
Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 16.
Տելեֆոն № 40.

(ե. ու. կ.) 984. 100—59

ՅԱՅՏՈՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծանուցագիր

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՏԵԱՆՈՒՄ առաջիկայ մարտի 1-ի ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է ԱՃՈՒՐԴ և 4-ի՝ նոյն ժամին ԿՐԿՆԱՃՈՒՐԴ, Ղօշավանքի «Տայլար» կոչված 600 դեսեատին վարելահողերը և արօտատեղերը կապալով տալու համար: Ցանկացողները պայմանների մասին տեղեկանալու համար կարող են դիմել նոյն տեսեանին ամեն օր առաւօտեան ժամը 9-ից—2-ը և երեկոյեան 6-ից—9-ը:

Անդամ կառավարութեան՝
Հաւաղասպ քահ. Ղարագեօզեանց
Քարտուղար՝ Ց. Այվազեան

(ա. օ.) 202. 4—3

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պըղատու ծառեր ու դէկորատիվ բոյսեր:

Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալոգը ուղարկվում է Զ Ր Ի:

(ու. կ. չ.) 108. 15—9

ԱՄԵՆ ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՕՐԻՈՐԴ

կամ պարոն, միայն 10 դասի ընթացքում, կարող է իր կամ իւրայինների համար պատրաստել

ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ՁԵՒԻ

ԾՔԵՂ ԿՕՇԻԿՆԵՐ

որոնք կէս գնից պակաս են նստում:

Ընդունում է ժամը 11—1 և 5—7-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցէն. Багратіоновская № 31, уг. Мухранской.

(ու. կ.) 212. 2—1

Ղարաբաղի ՀԱՅՈՑ ԿՕՆՍԻՍՏՕՐԻՆ յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, որ մարտի 12-ին, առաւ. ժ. 10-ին, նշանակված է

ԱՃՈՒՐԴ

Գանձասարի վանքի երկանաքարի հանքը պայմանով տալու համար: Աճուրդը կը սկսվի 1000 բուբլուց: Ցանկացողները պայմանի մանրամասնութիւնները կարող են իմանալ կօնսիստորիայի դիւանատանը, Շուշի:

Անդամ կօնսիստորիայի՝
Կարապետ ք. Վարդապետեանց

(ու. կ. չ.) 208. 4—1

Հրաւէր

Կաթուղիկէ ս. Աստուածածնի եկեղեցում (Մէյդանի ս. Գէորգ) ամսիս 21-ին, կիրակի, ժամը 12-ին լինելու է ծխականների ընդհանուր ժողով, երկրորդ անգամ. ուստի սրանով հրաւիրում եմ պ. պ. ծխականներին՝ նոյն օրը և ժամին շտապել եկեղեցի՝ մասնակցելու ժողովին:

Հերթական հարցերն են.—Տարեկան վերանորոգութեան հաշիւները, խորհրդակցութիւն ապառիկների մասին, եկեղեցական շինութեան մէջ եղած բնակարանների հարցը, ուսումնարանի Դ. բաժանմունքի հարցը և ընտրութիւններ երէցփոխի և հոգաբարձու:

Գործակալ՝ Գր. ա.-ք. Մանդակունի

(ու. շ. կ.) 209. 3—1

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

(Мадатовская, 5.)

ԱՅՍՕՐ, ՈՒՐԲԱԹ, ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ

JOUR FIXE

Հերթական երեկոյթը նուիրված է

ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԻՆ

(Պարիզում գերեզմանի վրա մահարձանի բացման առիթով)

Ամուսն Զեխովին

(Ծննդեան յիսնամեակի առիթով)

ՎԷՐԱ. ՖԷՕԴՈՐՈՎՆԱ

ԿՕՄՄԻՍԱՐԺԵՎՍԿԱՅԱՅԻՆ

(Մահվան առիթով)

ՈՉ ՈՐԻ առանձին տոմսակ չէ ուղարկվում:

Շիլլերեան տօնին հրաւիրատոմսերով հրաւիրված առուեսագէտներ, գրականագէտներ, գեղագէտներն ու լրագրողները իրանց ընտանիքներով հրաւիրվում են թէ այս և թէ սեզօնի հերթական բոլոր երեկոյթներին:

Հրաւիրվում են նոյնպէս «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ» (սեր. № V կապոյտ անդորրագիր ունեցող) բաժանորդները:

Սկիզբը երեկոյեան ժամը 7½-ին

ՏԵՍՈՒՉ ՍԱԼՕՆԻ՝ Տ. Նազարեան

124. 10—8

---

2 ՌՈՒԲԼՈՎ ՊԻԶԱԿ

Ոչդպիսի չեղած էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղ. պիջակ՝ տարվայ ամեն սեզօնին յարմար: Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մոդային, գործնական և ամուր կտորից՝ 2 ր.: Պիջակի կամ շալվարի ճանապարհած. 35 կ.: 3 և աւելի առարկ. ընդել տալուց՝ իմ հաշուին: Ուղարկ. եմ վերադարձն., պօստով, առ. կանխավճ., երաշխաւորութեամբ — եթէ չը հաւանվի՝ յետ եմ ընդունում: Պատուէրները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(ա. օ.) (В. 2782) 44. 33—24

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

«ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ»

Բովանդ.—սեռակ. գործարաններ. սերմը. սեռական յարաբերութիւն. մերձաւորութեան չափը, ձևը, հաստատութիւն. կանոնները. ժուժկալութիւն. օնանիզմ. երազախաբ. սպերմատորէա. բժշկութիւնը և այլն: Կազմեց մէջդից. ֆելդշէր Ա. ԵՍԱՅԵԱՆ, գինը 30 կոպ.: Այս գիրքը անհրաժեշտ է բոլոր չափահաս ամուսիններին և ամուսնացածներին համար: Պահանջի և պատուէրների սաստիկ մեծութեան պատճառով խնդրվում է այլևս 50-ից պակաս չը դիմել հեռագնակին, այլ Թիֆլիս՝ «Գուստէնբէրգ» և «Փարոս» գրավաճառանոցներին:

(օ. մ.) 179. 5—4

---

7 ՌՈՒԲ. 25 ԿՕՊԵԿՈՎ

ԵՐԿՈՒ ԶԳԵՍՏԱՅՈՒ!

Տղամարդու եւ կնոջ

2մերային կամ աշնանային դպեստի երկու էլեգանտ կոստ՝ ատամանգանց եւ կանանց՝ ուղարկվում է պօստով, առանց ճանապարհածախքի—7 ր. 25 կոպեկով (Մերիր հաշվում է 85 կ.): Եթէ դուր չը գայ—ֆաբրիկան փողը վերադարձնում է: Տղամ. կոստը $4^1/_4$ արշ. անգ. տրիկօ է, ամուր, բրդից, 2 արշ. լայնութեան, նորագոյն նկարներով, իսկ կան. կոստը 8 արշ. տրիկօ «ԱՐԿԱԴԻԱ», բրդից, մօդային նկարներով եւ էլեգանտ: Երկու կոստերն էլ ամեն տեսակ մութ գոյներ: Վերադիր վճ. ուղարկվելուց հաշվում է 16 կ. յաւելուն (պօստային սակագին): Ըստ ցանկութեան՝ նոյն գնով ուղարկվում է տղամ. կամ կանանց 2 կոստ. 2որս եւ աւելի կոստ բերել տալուց՝ տղամ. իւրաքանչիւր կոստին կցվում է ատատանգու, իսկ կանանց իւրաքանչիւս կոստին՝ արտասահմ. կաշուէ գօտի՝ մի անգամայն ձրի: Հասցէագրել. г. Лодзь, фабриканту МАРКУ БЕРНШТЕЙНУ. Ա.Թղթակցութիւնները ռուսերէն:

(19) (В. 10681) 139. 3—3

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Ֆրիումֆ» շէվիոտի մի ամրողջ կոստ՝ $4^1/_4$ արշ. տղամարդկանց,

ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ 2 Ր. 75 Կ.

Զը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կոստը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կոստների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և շքեղ: Գոյները՝ սև, մուգ-կապույտ, շագանակագոյն, ձիթագոյն: Ճանապարհածախքը 55 կոպ.: Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ

ՊԻԶԱԿ 2 ՌՈՒԲԼՈՎ

տարվայ ամեն սեզօնին մատչելի: Ճանապ. 35 կ.:

2 ՌՈՒԲԼՈՎ ՇԱԼՎԱՐ

ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված: Ճանապարհածախքը 35 կ.: Երեք և աւելի կոստ բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշուին: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 72 ж., фабриканту ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ

Թղթակցութիւնները ռուսերէն:

(19) (В. 2779) 43. 3—3

ՍՆԱՆԿԱՑԱԾ ՊԱՐՏԱՏԻՐ

Մովսէս-բէկ Պաւլովիչ Փիրումեանի

ԳՈՐԾԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ

→ ԿՕՆԿՈՒՐՍԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ ←

սրանով հրաւիրում է այն անձերին, որոնք ցանկանում են վերցնել Գանձակի նահանգի Շուշու և Զանգեզուրի գաւառներում գտնվող՝ Կօնկուրսային մասսայի անշարժ կալուածները կառավարելու գործը: Պայմանների մասին դիմել Կօնկուրսի նախագահ Վ. Ֆ. Բէնէնէկսին, Թիֆլիս, IX քաղաքամաս, Կիրօչնայա և Ելիզավետինսկայա փողոցների անկիւն, տուն Շարբարչեվի:

210. 1—1



500 ռուբլի պարգեւ

կը տանայ իւրաքանչիւրը, ով կապացուցէ, որ ստորև յիշված 25 ՀԱՏ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆԸ, ՍՐԹԻԼԷ., ՕՊՏԱՒԷՏ և ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՐԿՆԵՐԸ չարժեն նրանց համար նշանակված առասպելական էժան գինը, այսինքն՝

20 ՌՈՒԲ. ՓՈԽ. **ՄԻԱՅՆ 5 Ր. 90 Կ.**

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԵՒ ԿԸ ՀԱՄՈՁՎԷՔ!

1) Էլեգանտ, ամուր, զրպանի ժամաց. տղամ. համար, կամ կանանց ժամաց., բաց, անպլ. սև պղոպատիկ, բարձր տեսակի. գեղ. օպտիդացված, շատ տափակ ձևի, խիստ ուղղված ընթացքով:

2) Մաքրիկ. նոր ոսկուց շղթայ տղամ. կամ կան. համար:

3—8) 6 հատ գանաց. տես. բրելօքներ արծաթից, գեղեցիկ շինուածք:

9) ՆՈՐՈՅԹ! Ցնցային պատենտ. տպարան՝ 200-ից աւելի տառերից, թւանշ. և կէտադր. նշան. բաղկացած, որով կարելի է տպել ամեն տես. այցեքարտս, բլանկներ. ծրարներ և այլն:

10) ՈՒՆԵԼԻՔ՝ ՑՏՈՒԵՐԻ ՀԱՄԱՐ:
11 ՑՊԱՐԱՆԱԳԱՆ ՄԱՄՈՒԼ:
12 ՑՊԱՐԱՆԱԳԱՆ ՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՄՂՑԱԳԱՆ ԲՐԲՋ:
13) Պաշեայ պօրտմոնէ փողի համար 6 բաժ., արտաս. ամուր կաշուց, առանձ. բաժ. ոսկէ դրամն. համար մեխանիկ. փականով՝ պարունակելով իր մէջ կնիքի համար գաղանի տեղ:
14) Պատուհրէ կնիք պատուիրողի անուն-ազգանունով:
15) ՄԻ ՍՐՈՒՇԿ ԹԱՆԱՔ ԳՆԻՔԻ ՀԱՄԱՐ:
16) ԳՐՊԱՆԻ ԱՒՏՕՄԱՏ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ-ԲՐԵԼՕԿ կանացի հետաքրքր. Ջ նկարով:
17—25) ԱՐԾԻԼԷ. և ՕՊՏ. ԸՆԾԱՑ. զարնիտուբ, որ պարունակում է (տես նկարը)—ա) տղամ. մատանի «Դուբլէ», շքեղ շինուածք, պարիզ. ձևի, կեղծ քարով, բ) նոյն տեսակ կանացի մատանի, գ) նոյն տեսակ բրոշ կեղծ քարերով և դ—թ) կանացի գլխի արդուզարդ բաղկացած փղոսկրեայ 6 սանրերից, ֆանտաստիկ շինուածք: Այդ բոլոր տպրանքներն ունենալով առաջին ձեռքից՝ մենք հնարաւոր է մեզ թոյլ տալ թէ էժան և թէ լաւ միաներից, և ի նկատի ունենալով խոշոր սպառումը՝ մենք նշանակել ենք անհամեմատ էժան գին—ՄԻԱՅՆ 5 Ր. 90 կ.: Տղամ. կամ կան. փակ ժամաց. 24 յաւելուածներով 6 ր. 90 կ.: Ուղարկում ենք պատուէրը ստացած օրից: Ամեն ինչ՝ ներառեալ տուփ, վերադիր վճ. և առանց կանխավճ.: Ժամաց. լաւ ընթացքի համար ուղարկ. ենք երաշխաւոր. 6 տարով: Ճանապարհածախքը 50 կ., Միջին-Ասիա և Սիբիր—90 կ.:

Պահանջները խնդրում ենք հասցէագրել. Экспортному Дому А. ВУЗЕЕРЪ, Варшава, Порожная 14 -69

Ց. Գ.—Բիսկ հարկաւոր չէ, որովհետև չը հաւանած դէպքում փողը վերադարձնում ենք:

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով:

(փ. 19, մ.5,20,տպ.3.15) (В. 4341) 48. 7—3

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.